ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1809 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Ոստիկանության ծառայողի և ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողի ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման կարգը և չափը սահմանելու մասին» N 111-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման, որոշման 1-ին, 2-րդ հավելվածների և ձևի վերնագրերում, ինչպես նաև որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում, 3-րդ կետում և 1-ին հավելվածում «ոստիկանության ուսումնական» բառերը փոխարինել «լիազոր մարմնի ուսումնական» բառերով.

2) որոշման 1-ին և 2-րդ հավելվածներում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ուսումնական» բառերով.

3) որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետի «ա» ենթակետում «ոստիկանության ֆինանսաբյուջետային» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային» բառերով, իսկ «բ» ենթակետում «ոստիկանության կադրային քաղաքականության» բառերը՝ «ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ